ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____Դ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

«20» _____08_____ 2020 թվական

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՑ ՔՈԼԵՋԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

ՀՐԱԶԴԱՆ 2020

Ընդհանուր դրույթներ

1.Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի դասախոսական և ուսանողական համակազմից քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի անդամ առաջադրվելու և ընտրվելու ընթացակարգը:

2.Կառավարման խորհրդում ընդգրկվելու համար դասախոսական համակազմից, խորհրդի անդամների 20 տոկոսի չափով՝ 2 հոգի, անդամ է առաջադրում մանկավարժական խորհուրդը՝ ղեկավարվելով «Մանկավարժական խորհրդի կանոնակարգով»:

3. Կառավարման խորհրդում ընդգրկվելու համար ուսանողական համակազմից, խորհրդի անդամների 25 տոկոսի չափով՝ 3 հոգի, անդամ է առաջադրում ուսանողական խորհուրդը ՝ ղեկավարվելով «Ուսանողական խորհրդի կանոնակարգով»:

4.Սույն փաստաթղթի համար հիմք է հանդիսանում նաև Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի կառավարման խորհրդի կանոնակարգը:

5. Սույն ընթացակարգում փոփոխություններն ու լրացումները հաստատվում են նույն կարգով:

Կառավարման խորհրդում դասախոս-անդամ(ներ)ի առաջադրման ընթացքը

4. Ուսումնական հաստատության Կառավարման խորհրդի ձևավորման կամ արդեն ձևավորված խորհրդում դասախոս-անդամի փոփոխման/առաջադրման համար տնօրենը Մանկավարժական խորհրդին է ներկայացնում սույն խորհրդի ձևավորման համար անհրաժեշտ դասախոս-անդամների ներկայացման կամ արդեն ձևավորված խորհրդում դասախոս-անդամ(ներ)ի փոփոխման անհրաժեշտությունը:

5. Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը ներկայացնում է Խորհրդի դասախոս-անդամ(ներ)ի թեկնածու(ներ)ին՝ հաշվի առնելով վերջին(ներ)իս հասարակական ակտիվությունը, աշխատանքային պարտականությունների լիարժեք կատարումը և քոլեջի զարգացման մեջ ներդրում ունենալը:

6.Առաջադրված դասախոս-անդամ(ներ)ի թեկնածությունը դրվում է բաց քվեարկության:

7. Խորհրդի որոշմամբ հաստատվում է կառավարման խորհրդում դասախոս-անդամ(ներ)ի թեկնածությունը:

8.Խորհրդի դասախոս-անդամ(ներ)ի փոփոխության հարցը քննարկվում է , եթե, ըստ կառավարման խորհրդի կանոնակարգի, դասախոսը հրաժարական է տվել, կորցրել է քոլեջում իր աշխատանքը, դատապարտվել է ազատազրկման, դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ, առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին, մահացել է:Այս դեպքում առաջադրման և ընտրության ընթացակարգը նույնն է:

9.Նիստը արձանագրվում է և որոշումը ներկայացվում լիազոր մարմին:

Կառավարման խորհրդում ուսանող-անդամ(ներ)ի առաջադրման ընթացքը

10. Ուսումնական հաստատության Կառավարման խորհրդի ձևավորման կամ արդեն ձևավորված խորհրդում ուսանող-անդամ(ներ)ի փոփոխման/առաջադրման համար տնօրենը Ուսանողական խորհրդին է ներկայացնում սույն խորհրդի ձևավորման համար անհրաժեշտ ուսանող-անդամների ներկայացման կամ արդեն ձևավորված խորհրդում ուսանող-անդամ(ներ)ի փոփոխման անհրաժեշտությունը:

11.Ուսանողական խորհրդի նախագահը ներկայացնում է Խորհրդի ուսանող-անդամ(ներ)ի թեկնածու(ներ)ին՝ հաշվի առնելով վերջիններիս հասարակական ակտիվությունը և առաջադիմությունը:

12.Առաջադրված ուսանող-անդամ(ներ)ի թեկնածությունը դրվում է բաց քվեարկության:

13. Խորհրդի որոշմամբ հաստատվում է կառավարման խորհրդում ուսանող-անդամ(ներ)ի թեկնածությունը:

14.Խորհրդի ուսանող-անդամ(ներ)ի փոփոխության հարցը քննարկվում է , եթե, ըստ կառավարման խորհրդի կանոնակարգի, կորցրել է քոլեջում ուսանողի կարգավիճակը(հեռացվել է, մեկնել է ծառայության կամ ավարտել է), առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին:Այս դեպքում առաջադրման և ընտրության ընթացակարգը նույնն է:

15.Նիստը արձանագրվում է և որոշումը ներկայացվում լիազոր մարմին:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները կատարող՝ Վ. Թովմասյան